ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-26 ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

1) Սուրեն Մամյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

1) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժնի պետ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Շվեյցարիայի Համադաշնություն՝ Ժնև քաղաք, Ազգերի պալատ

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ՄԱԿ ԵՏՀ քարտուղարություն:

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)

Գործուղման նպատակն էր մասնակցել 2024թ. ապրիլի 22-ից 26-ը UNECE-ի ռեսուրսների կառավարման շաբաթվա շրջանակներում կայանալիք ռեսուրսների կառավարման հարցերով փորձագետների խմբի 15-րդ նիստին:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Ռեսուրսների կառավարման շաբաթվա շրջանակներում կայանալիք ռեսուրսների կառավարման հարցերով փորձագետների խմբի 15-րդ նիստին քննարկվեց նույն խմբի 14-րդ նիստի արդյունքներով 47 կետից կազմված եզրակացությունների և առաջարկությունների նախագիծը:

Մասնակից պետությունների կողմից իրենց երկրներում վերջին տարվա ընթացքում կատարված աշխատանքների զեկույցները ներկայացնելու արդյունքում նշված եզրակացությունների և առաջարկությունների փաթեթում ավելացվեցին նոր կետեր և այն վերջնական տեսքով ներառեց թվով 84 եզրակացություն և առաջարկություն:

Նիստի շրջանակներում ներկայացվեց CRIRSCO ստանդարտի և ՄԱԿ-ի շրջանակային դասակարգման կապակցող փաստաթուղթը, շեշտվեց վերջինս եվրոպական տարածաշրջանում և դրա սահմաններից դուրս օգտագործելու կարևորությունը:

Ներկայացվեցին տարբեր երկրների փորձերը «Առաջատար փորձի միջազգային կենտրոն»-ների ստեղծման աշխատանքների վերաբերյալ և այլն:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Փորձագետների խմբի 15-րդ նիստի եզրակացությունների և առաջարկությունների վերջնական խմբագրմանը հաշվի առնվեցին նաև մեր առաջարկները:

Առանձին հանդիպումների և քննարկումների ժամանակ հայտնեցինք ՀՀ պատրաստակամությունը տարբեր ստանդարտների գծով համատեղ աշխատանքների կատարման մասին քննարկումներ սկսելու և դրա հնարավորությունը պարզաբանելու համար:

Քննարկումների ժամանակ մեր կողմից առաջարկվեց նաև ռեսուրսների կառավարման հարցերով փորձագետների խմբի 15-րդ նիստի արդյունքում ընդունվելիք եզրակացությունների և առաջարկությունների նախագծում ավելացնել Հայաստանի Հանրապետությունում նախորդ տարիներին կատարված աշխատանքների և ՀՀ կառավարության կողմից 2023 թվականին հաստատված հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարությամբ նախատեսված գործողությունների կատարման վերաբերյալ մեկ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «Փորձագիտական խումբը նշեց ռեսուրսների կայուն կառավարման նպատակով Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության ընդունման կարևորությունը և առաջարկեց ռազմավարությամբ նախատեսված գործողությունների կատարման արդյունքները շարունակական ներկայացնել»: Քարտուղարության կողմից առաջարկվեց ՀՀ առաջարկը ներկայացնել պաշտոնական խողովակներով:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Քննարկումների արդյունքում որոշվեց հաստատել փորձագիտական խմբի եզրակացությունները և առաջարկությունները:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առաջարկվում է ՄԱԿ ԵՏՀ քարտուղարություն ներկայացնել առաջարկ ռեսուրսների կառավարման հարցերով փորձագետների խմբի 15-րդ նիստի արդյունքում ընդունվելիք եզրակացությունների և առաջարկությունների նախագծում ավելացնել նոր կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «Փորձագիտական խումբը նշեց ռեսուրսների կայուն կառավարման նպատակով Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության ընդունման կարևորությունը և առաջարկեց ռազմավարությամբ նախատեսված գործողությունների կատարման արդյունքները շարունակական ներկայացնել»:

10. ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ, ԱՄՍԱԹԻՎԸ

Սուրեն Մամյան

02.05.2024թ.